միակ պահապան մի կը հոկէ, այն երբեմն փառա-տեսիլ վանքին տխրատեսիլ և ծեփաթափ որմոց վրայ, որոց ստուերին տակ կը հանդչին վանքին սըրբասուն հիմնադրաց ոսկերք, դարևոր կնձնիք, կաղամախք, նշդարիք և հացիք հաստաբեստ բուներովն, վկայք անցեալ փառաց, կարծես այժմ կ'ողբան վանքին ամայութեան վրայ՝ երբ յանկարծ գերեզմանական լռութեան մէջ կը փչէ քամին։ Այլ կրկին անապակ ջրերով յորդառատ լուսաղբիւրք՝ անտարբեր անցեալ և ներկայ վիճակի վանացս՝ իրենց սառնորակ ջրերով միակերպ կը հոսին։ Վանքիս արժանավայել դաղափար մի տալու համար ընթերցողաց, 'ի մէջ կը բերեմք Յակոբ վարդապետի Կաֆայեցւոյ գրած տողերը, որ բաղդ ունեցել է ականատես վկայ լինելու վանքիս փառացն և ճոխութեան (1694)։

Կամաւ Սուրբ Հոգւոյն ոմանք գիտնական,
Յովհաննէս անուն չնորհիւ պետական.
Լեալ նա յաշխարհէն մեծ Սեբաստական,
Կանգնեալ հաստատով զվանքս Սուրբ Նշան։

Ունելով ընդ իւր զիւրայսն փրկչական,
Եկեալ 'ի յաշխարհս փառօք մեծական,
Ամիսք եալ զման խնամաք տեառնական,
Վերակառուցեալ զվանքս Սուրբ Նշան...

Բամբ ժողովրդոց մեծ և փոքրական,
Անչափ բարութեամբ առ 'ի քեզ ուխտ գան.
Հոգւով և մարմնով ցնծան և խնդան.
Ապաւէն ազգիս աթոռ Սուրբ Նշան...

Արտաքոյ ներքոյ պատեալ ամրական,
Սրբատաշ քարիւք ես կամարական.
Մեծ կամուղիկէ, տուն արքայական,
Ճեմեալ ճեմարան, հարակ Սուրբ Նշան...